



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



4

432





1999







ՏԱՍՆԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ամերիկական Կրթասիրաց

Ընկերութեան

ՀԻՄՆՈՒԱԾ 1906ԻՆ




ՆԵՐՍՕ ՏՊԱՐԱՆ

ՆԻԻ ԵՈՐԻ

1917

9  
132







9-  
+32

ԱՄՐԻԿԱԶԱՅ  
ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ի Մ Ն Ե Ա Լ 1906

Ի Յիշատակ



ՄԱՐԻԸՆ Լ. ՓՈՒՇՄԱՆԵԱՆԻ

Ծնած՝ Մարտ 24, 1901

Մեռած՝ Սեպ. 9, 1905



«Մէն մի ազգի ապագայ ապահովութեանը եւ ճա-  
կատագրին ուղղութիւնը՝ գլխաւորաբար եւ հիմնա-  
կանապէս կախում ունի կրթութենէ եւ դաստիարա-  
կութենէ»:

L. KOSSUTH

«Դաստիարակութիւնը՝ ազգի մը գլխաւոր պաշտ-  
պանութիւնն է»:

EDMUND BURKE

28-498



432-79





## ԽՕՍԲ ՄԸ

Յաւէտ յայտնութիւն մ'եղաւ մեզի համար :

Տեղեկագրութիւնս մեծ ընդունելութիւն գտաւ Ամերիկահայ մամուլէն, առանց բացառութեան, որ հրատարակեց զայն, մասամբ կամ ամբողջութեամբ : «Ազգ», «Կոչնակ», «Հայրենիք» եւ «Նոր Կեանք» խրատագրականներ նուիրեցին Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութեան *ազգաշէն* նպատակը դրուատող, եւ հեղինակաւոր ձայներ ո'չ միայն ջատագովեցին անոր տասնամեայ գործունէութիւնը, այլ՝ անոր մէջ տեսան զօրաւոր ազդակ մը—լծակ մը—վաղուան վերածնելի հայութիւնը բարձրացնող :

Ամէնքն ալ, ազգային փրկութեան անյետաձգելի իբր միջոց, Ա. Կ. Ընկերութիւնը զօրեղապէս յանձնարարեցին ժողովուրդի լուրջ նկատողութեան :

Այս քաջալերական երեւոյթին առջեւ՝ աւելի պայծառացաւ մեր տեսիլքը, եւ մենք աւելի խորունկցանք մեր համոզումներուն մէջ Կրթասիրացի շինարար դերին նկատմամբ՝ մեր տառապակոծ եւ սիրեցեալ ազգի շինութեան համար : Եւ ուստի, սիրեցինք



անջատ տետրակի մը ձեւով հրատարակ դնել  
մեր տեղեկագիրը, եւ անոր շուրջ յայտնուած  
խորհրդածուփիւնները քաղուածաբար: Եւ  
այսպէս, անգամ մը եւս, եթէ կարելի է,  
լուրջ եւ անվերապահ ուշադրութեանը են-  
թարկել Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերու-  
թեան նպատակը՝ բոլոր անոնց, որոնց մէջ  
Հայու սէրը մտած չէ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



# ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՏԱՍՆԱՄԵՍԱԿԻՆ ԱՌԹԻԻ

1899ին, Ագրիպպաս, Մարսիլիայի «Արմէնիա»ին մէջ, իր «գիւղացիիս հետ» յօդուածաշարքով զօրեղապէս կը շեշտէր Ամերիկահայ երիտասարդներու համալսարանական կրթութեան կենսական պէտքը մեր ագրային վերածնութեան տեսակէտով, ու կ'առաջարկէր ժողովրդային կազմակերպութեամբ մը «ուսանողներին հաստատուն կրուան մը ստեղծել՝ վրիպումներ անկարելի դարձնելու համար»: Քանզի, կը յարէր նա, «Քանի՛ քանի՛ փայլուն ուսանողներ այլեւս անկարող ըլլալով հանդուրժել իրենց առջեւ ելած նիւթական նեղութիւններուն, մէկ անգամէն թողնել ու հեռանալ պարտաւորուեր են. իսկ եթէ շարունակած են, հետզհետէ աւելի մաշուելով այնքան սմբեր են, որ վերջապէս աչխարհէս իսպառ հրաժարած են. . . :»

Մօտաւորապէս վեց տարի վերջը, նոյն յօդուածագիրը, այս անգամ «Պապալէ» ստորագրութեամբ, դարձեալ սոյն խնդրոյն անդրադառնալով՝ կը գրէ «Արմէնիա»ի մէջ. «Արդէն Ամերիկայի մէջ ապրող Հայ մը կոյր



պէտք է լինի որ շտեմնէ արհեստներ ու գի-  
տութիւններ ուսանելու հրաշալի արդիւնքը ,  
եւ ինք ալ շմոլուի յառաջ երթալու համար :  
Հոս ու հոն Հայ երիտասարդներ ճիգ ու ջանք  
կը թափեն վարժարաններ մտնելու եւ ար-  
ուեստ մը սորվելու , որ թէ՛ իրենց շահարեր  
լինի եւ թէ՛ կարենան աղղային վերածնու-  
թեան գործին ծառայել : Բայց , ո՞վ պիտի  
իրենց առաջնորդէ այս ընդարձակածաւալ եւ  
մանուածապատ բաւիղին մէջ որ Ամերիկա  
կը կոչուի . ո՞վ պիտի դորացնէ անոնց տկար  
ու դողդոջուն քայլերն երբ նեղութեան մէջ  
ինկած են :» Եւ ի պատասխան իր այս հարց-  
ման՝ յարգելի յօդուածագիրը «անհուն ցըն-  
ծութեամբ» մը կ'աւետէ լուրը Ամերիկահայ  
կրթասիրաց Ընկերութեան կազմութեան :

Միրեցինք այս մէջ բերումները ընել Պա-  
պալէի յօդուածներէն , որովհետեւ անոնք  
ճշգրտիւ կը պատկերեն սքանձաւան այն պա-  
րագաները , որոնց տակ երկնեցաւ Ընկերու-  
թիւնը : Իրական ու լայն պէտք մը կար մէջ-  
տեղը : Տասնեակներով Հայ ուսանողներ —  
մտացի եւ ուրիշ՝ ցեղի փոռք ու պարծանք ըլ-  
լալու ամէն գեղեցիկ յատկութիւններով օժ-  
տուն աշակերտներ — աննպաստ ու անհաս-  
նար պայմաններու ներքեւ կ'ստիպուէին  
պայքարիլ համալսարանական կրթութեան  
մը տաժանքոտ ճարուն վրայ . իրենց բնական



ու նիւթական բարդ դժուարութիւնները  
հարթելու համար: Եւ, ինչպէս կը մատնա-  
նըչէր Յ. Ազրիպպա, այս երիտասարդնե-  
րէն ոմանք անձուկ պարագաներու ճնշումին  
տակ, յոգնաբեկ ու շնչասպառ, իսպառ կը  
լքէին յաճախ իրենց դպրոցական յառաջա-  
ցած ընթացքը, եւ ուրիշներ, կառչած իրենց  
խտէալին, կը յամառէին քալել ի վնաս իրենց  
առողջութեան ու ապագայ երջանկութեան:  
Ամերիկահայ կեանքին մէջ օրէ օր շեշ-  
տուող այս կացութեան ի տես՝ տարիներու  
չրջահայեաց ու կշռադատ խորհրդածու-  
թիւններէ վերջ, ազնիւ ներշնչման մը տակ՝  
Տիար Կ. Թ. Փուշմանեան որոշեց ընդ առաջ  
երթալ Հայ ուսանողներու այս պէտքին, հե-  
ռատես ու գործնական խտէալով մը: Եւ 1906-  
ին Տիար Փուշմանեան \$25,000 դրամագլխով  
մը ծնունդ տուաւ Ամերիկահայ Կրթաւիրաց  
Ընկերութեան՝ ի յիշատակ իր վաղամեռիկ  
դստեր Մարիընի, «առանց յարանուանական  
խտրութեան, դրամապէս օգնելու Ամերիկա  
գտնուող խոստմնալից ու կարող Հայ երի-  
տասարդներու, որոնք արուեստագիտական  
(professional) բարձր դասընթացք մը առնե-  
լու համար նպաստի կը կարօտին»: Եւ այսօր,  
ճիշդ տասը տարի վերջը, Ընկերութեանս  
տասնամեակին առթիւ, անտեղի չէ կը կար-  
ծենք հանրութեան ներկայացնել անոր տաս-



նամեայ գործունէութիւնը ու յարակից քանի մը ուշագրաւ կէտերը :

1906-1916 Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութիւնը դրամապէս օգնած է եօթանասուներկու աշակերտներու հետեւեալ ելեմտացուցով ,

ՄՈՒՏՔ  
Հաստատուն դրամապլխի տոկոսէն \$15,000.00

Տիար Մ . Փարակէօզեանէ 1,000.00

Անհատական նուէրներէ 19.00

Ի հաշիւ պարտուց աշակերտներէ վերադարձուած 3,520.00

19,539.00

Ե Լ Ք

72 աշակերտներու իսխարուած \$18,582.50

Ընդհ . ծախք 568.33

19,150.83

Պատրաստ դամար \$ 388.17

Հետաքրքրական է դիտնալ, թէ այս եօթանասուն երկու ուսանողները 35 տարբեր դպէճներէ, արհեստագիտական դպրոցներէ ու համալսարաններէ, հետեւած են 19 դասնազան դասընթացքներու . —

1 Երկրագործութեան ,



- 1 Առեւտրական գիտութեան ,
- 1 Ակնարութութեան ,
- 1 Ելեքտրականութեան ,
- 1 Ընկերարանութեան եւ պատմութեան ,
- 2 Ուսուցչութեան ,
- 2 Մանկավարժութեան ,
- 2 Աստուածարանութեան ,
- 2 Բնագիտութեան եւ Հաշուեգիտութեան
- 3 Դեղագործութեան ,
- 4 Երաժշտութեան ,
- 4 Օրէնագիտութեան ,
- 2 Մեքենական ճարտարագիտութեան ,
- 3 Հանքային »
- 4 Ելեքտրական »
- 8 Քաղաքային »
- 8 Ատամնարութութեան ,
- 10 Տարրարանութեան ,
- 14 Բժշկութեան :

Սակայն , ինչպէս ուրիշ առթիւ գիտել  
 տուած ենք , «Ընկերութեանս գործունէու-  
 թիւնը սահմանափակուած չէ լոկ դրամական  
 փոխառութեան մէջ : Գործին բնոյթն իր  
 շուրջ ստեղծած է նաեւ բարոյական հանդա-  
 մանք մըն ալ , որ թէեւ դեռ ոչ այնքան աչքա-  
 ռու , բայց յղի է ապագայ լայն կարելիու-  
 թիւններով» : Երկիրէն նոր հասնող հինգ ե-  
 րիտասարդներու գործնական թելադրու-  
 թիւններ տրուած , ու անոնց դասընթացքի



ընտրութեան եւ ծրագրի կազմութեան մասին՝ զանազան տեղեկութիւններ հաղորդուած են գոլէճներու շուրջ : Ատկից զատ երկու համալսարաններէ ընկերութեանս մօտ եղած մտերմական հաղորդակցութենէն օգտուելով՝ ուսանողի մը դպրոցագնի մասին նպաստաւոր կարգադրութիւն մը ձեռք բերուած է : Եւ հոս փութանք յարելու, թէ Ընկերութիւնս այժմ ունի միջոցներ ու դիւրութիւններ իր տրամադրութեան տակ՝ ոչ միայն օգտակար ըլլալու դպրոցական խնդիրներու շուրջ իրմէն խորհուրդ եւ թելադրութիւն հարցնող երիտասարդներու, այլ՝ վաղը — ազգային լաւագոյն օրերուն մէջ — հայրենիքի կրթական պէտքին ու Ամերիկահայ պատրաստ մշակներու միջեւ հայթայթիչ միջնորդի դեր ստանձնելու : Հաշուետան (Clearing house) պաշտօն կատարելով : «Ուսանողին մէջ անձնական արժանապատուութեան ոգին ու ինքնօգնութեան փրկարար գաղափարը պահելու համար», Ընկերութիւնս որդեգրած է փոխապատուութեան ՕՐԻՆԱԿԱՆ ձեւը : Եւ այսօր ստիպուած ենք բարեփոխել առթիւ մը մեր ըրած սայտարարութիւնը թէ, «եղած ջանքերուն ու կրկնակի դիմումներուն հակառակ յետնեալ տներքերու գանձումը յուսահատական ըլլալու աստիճան պզտիկ գտած ենք ու դան-



դադ» : Որովհետեւ, ամբողջ այս տարուան ընթացքին՝ պարտականներու ըրած վճարումներն ու տուած հաւաստիքները հաւաքարար անելով՝ մեծապէս զոհացուցիչ կը գտնենք արդիւնքը : Նպաստընկալ ուսանողներէ տասներկու անձինք հայրենիք մեկնած են եւ տասն եւ մէկ հոգի ամբողջովին փակած իրենց հաշիւները, նոյն իսկ սմանք կամաւոր փոքր նուէր մ'ալ ընելով : Հինգ կամ վեց աշակերտներ զանազան պատճառներով, կամայ ահամայ, ամբողջովին թերացած են իրենց վճարումներուն մէջ եւ զմեզ յուսախարութեան մատնած : Այնպէս որ, ինչպէս կը տեսնուի ելեւմտացոյցէն, մինչեւ օրս աշակերտներու վերադարձուցած գումարը կը հասնի -3,520ի — նպաստի ամբողջ գումարին (\$18,582.50) գրեթէ մէկ հինգերորդը : Մենք այս քաջալերական երեւոյթին հետ մեծ հաճոյքով նաեւ կը տեսնենք թէ Հայ ուսանողներու հետ Ընկերութեանս ունեցած դրամական գործառնութեանց մէջ, անոնք, քիչ բացառութեամբ մը, ամենքն ալ ասպետական արժանապատուութեամբ հաւատարիմ գտնուած են իրենց «պատուոյ խօսքին» : Հաստատապէս վստահ ենք որ ամեն Հայու սրտին ցնծութիւն կ'առթէ սա պարագան, թէ տասը տարուան միջոցին եօթանասուն երկու Հայ ուսանողներ — պարտաճա-



նաչ, մտաւորական բարձր կարողութեամբ  
օժտուած, ու արժանապատուութեան զղա-  
ցումով տողորուն, ամենքն ալ — թեթեւցած  
զտան ինքզինքնին իրենց միակ սրտմաչ հո-  
գէն, դրամի անձկութենէն, որ ՔՐՈՆԻԿ ախ-  
տի մը պէս կորովն ու փառասիրութիւնը կը  
կրծէ անոնցմէ շատերուն: Վարչութեանս  
համար սակայն՝ այս գոհունակութիւնը ան-  
խառն չէ, այն տխուր պատճառով, որ տասը  
տարուան ընթացքին անախորժ ստիպումը  
ունեցաւ մերժելու աւելի քան հարիւր յիսուն  
պատուական ուսանողներու փոխառութեան  
կրկնակի դիմումները: Ո՛չ թէ որովհետեւ  
այս խնդրարկուները ունէ չափով վար կը  
մնային իրենց վիճակակիցներէն վարչու-  
թեանս համարումին առջեւ, եւ կամ կը թե-  
րանային Ընկերութեանս պարտադիր պայ-  
մանները լեցնելու մասին: այլ՝ պարզապէս  
այն պատճառաւ, որ տարեկան պիւտճէն  
խիստ նեղ կուգար, ու մենք չէինք կրնար հո-  
վանաւորել ամբողջ մեծ կարաւանը կրթու-  
թեան այս Հայ ուխտաւորներուն: Եւ, սրտի  
միեւնոյն դառն սեղմումով, վարչութիւնս  
ստիպուեցաւ մերժել նաեւ ուսանողուհիներ,  
որոնք ծովն ինկածի մը հողերանութեամբ  
ձեռքերնին ի գուր կ'երկարէին Ընկերու-  
թեանս թափուր եւ անզօր պիւտճէին, եւ յա-  
ճախ այնպիսիներ ալ, որոնք իրենց դպրո-



ցաշրջանի կիսուն՝ հեն ի հեր եւ ուժաս-  
պառ՝ աչքերնին Ամերիկահայ Կրթասիրաց  
Ընկերութեան կը դարձնէին ճարահատ :

Անձնական ջանքերով, անձուկ միջոցնե-  
րով, ու դպրոցադնի մը համար ինքզինք քա-  
րէ քար դարնող Հայ ուսանողը միայն կրնայ  
իրականացնել այս յաճախադէպ յուսախա-  
րութեանց դառնութիւնը, զոր մենք շարու-  
նակ բաժնեցինք մերժուողներուն հետ : Եւ  
այժմ աւելի յուսաւոր եւ յուսալից հանգըր-  
ուանի մը վրայ չէ՛ որ կը գտնուինք դժբաղ-  
դարար : Այսօր, առաւել քան երբեք, Ամերի-  
կահայ երիտասարդներէն արուեստագիտա-  
կան դասընթացքի հետեւողներուն թիւը,  
ուրախ ենք ըսելու, սկսած է օրէ օր յարա-  
ճուն համեմատութիւն մը առնել : Բայց ա-  
սոնցմէ շատերուն տաժանքոտ ուղին — նիւ-  
թական անողորմ դժուարութիւնները — հար-  
թելու համար անհատարար կամ ազգովին  
ձեռք առնուած միջոցները, եթէ երբեք կան,  
խիստ անհամեմատական են պէտքը լեցնելու,  
որով կամ՝ այն է որ քիչ բազմաւորներ իս-  
պառ պիտի դադրին իրենց իտէալը հետա-  
պնդելէ, եւ կամ՝ անլուր զրկանքներով պիտի  
պայքարին կրթական բազմաժախս պահանջ-  
ներուն հետ : Եւ ասոնց երկուքն ալ դէժ ազ-  
գային տեսակէտէ՛ փափաքելի չեն բնաւ :

Վարչութիւնս իր յարաբերութեան



բերմամբ՝ մօտէն իրազեկ այս կացութեան ,  
Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութեան այս  
տասնամեակին առթիւ , անձկանօք հետամը-  
տեցաւ գիտնալու թէ՛ արդեօք Ընկերութիւ-  
նը , գէթ չափով մը , կրցա՞ծ է արդարացնել  
իր դոյութեան նպատակը , եւ թէ՛ ի՞նչ մի-  
ջոցներով կարելի է ուժաւորել անոր դործու-  
նէութիւնը եւ ստուարացնել դրամագլուխը ,  
առաւելագոյն չափով ծառայելու համար Ա-  
մերիկահայ ուսանողութեան : Այս հարցում-  
ները մենք մեզի ընելէ վերջ , զանոնք ի միջի  
այլոց , շրջաբերական նամակով մը ուղղե-  
ցինք քսանեւհինգ զանազան անձինքներու ,  
որոնց մեծամասնութիւնը ո՛չ միայն անձնա-  
պէս օգտուած է Ընկերութենէս , այլ այսօր  
հրապարակի վրայ է իբր դիրքի , գործի ու  
պաշտօնի տէր պատուաբեր Հայ : Ղրկուած  
հարցումներէն երկուքը եւ անոնց տրուած  
պատասխանները ասոնք են :

1. — Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերու-  
թիւնը կրցա՞ծ է ծառայել իր նպատակին :

«Կրթասիրացը ունեցած է համեատ ծրա-  
գիր մը . . . : Որքան որ կրցած եմ դիտել , այն-  
քան հաստատ համոզուած եմ թէ այն իր այս  
նպատակին ծառայած է լիուլի , անշուշտ իր  
կարողութեան սահմանին մէջ : Կը ճանչնամ  
Ամերիկայի մէջ բարձր դիրքերու հասած մը-  
տաւորականներ , որոնք Կրթասիրացի հա-



մետ նպատին շնորհիւ կարող եղած են ի-  
րենց դպրոցական ուսումը աւարտել, եւ այ-  
սօր Հայութեան ամենէն թանկագին դրա-  
մագլուխը — մատաւորական եւ հոգեկան —  
կը կազմեն :»

\* \* \*

«Առանց վարանելու կրնամ վստահօրէն  
ըսել, թէ առանց անոր (Ընկերութեան) դը-  
րամական ու բարոյական օգնութեան՝ հաւա-  
նական չէր որ կարող ըլլայի բարձր կրթու-  
թեան ընթացք մը բոլորել :»

\* \* \*

«Հաստատապէս կը հաւատամ թէ առողջ  
եւ գործնական դաստիարակութիւն մը լաւա-  
գոյն, եթէ ոչ միակ, միջոցն է մեր երիտա-  
սարդութիւնը պատրաստելու Հայաստանի  
վերականգման համար, ու այս տեսակէտը  
նկատի ունենալով՝ Ամերիկահայ Կրթասի-  
րացը ազնիւ նպատակ մը հետապնդած է, ու  
այժմ կ'իրագործէ զայն :»

\* \* \*

«Կրթասիրացը եղած է այն հաստատու-  
թիւններէն մին որոնք Ամերիկահայ գաղու-  
թին կը մատուցանեն մեծագոյն ծառայու-  
թիւն մը նուազագոյն աղմուկով :»

\* \* \*

«Պէտք էր Կրթասիրաց Ընկերութենէն



օգտուած չըլլայի որպէս զի կարող ըլլայի  
ըսելիքս ըսելու, առանց երբեք տարակուսե-  
լու թէ մի գուցէ այդ պարագան կերպով մը  
նախապաշարած ըլլայ զիս: Սակայն հին  
թուղթերու մէջ ձեռքս ինկաւ 6-7 տարի ա-  
ռաջ Ամերիկահայ թերթի մը մէջ ձգած մէկ  
բացագանչութիւնս՝ գրուած Ամերիկահայ  
ուսանողութեան աղետարչ մէկ պատկերին  
ի տես. «Ա՛խ, մէկ երկու Փուշմաններ եւս,  
մէկ երկու կէս Փուշմաններ, եւ արժանաւոր  
գործ մը գլուխ կ'ելնէ Ամերիկահայ կեանքին  
մէջ»: Ու այս աղագակը ձգած էի յուղուած  
Հայ ուսանողի մը պարագային, որ օրական  
ժամ մը հացով կը յամառէր պայքարիլ  
զեռ»:

2.- Ի՞նչ եղած են Ընկերութեանս թերա-  
ցումները:

«... ես անձնապէս Ընկերութեան առա-  
ւելութիւններուն ծանօթ եմ քան անոր թե-  
րացումներուն...»:

\* \* \*

«Չեմ գիտեր թէ ինչ եղած է Կրթասի-  
րացի թերացումը, բացի այն պարագայէն,  
որ անկարող եղած է բոլոր դիմումները գո-  
հացնելու:»

\* \* \*

«Անցեալին մէջ Ընկերութիւնը օժանդա-




կած է խոստմնալից երիտասարդներու, ա-  
ռանց նկատի ունենալու անոնց քաղաքական  
համոզումները: Ասկէ աւելի զօրաւոր հաւաս-  
տում մը կարելի չէ գտնել պարզադրելու այն  
ուղիղ, աննախապաշար վերաբերումը որ  
Ընկերութեանդ գործելակերպը կը պատկե-  
րացնէ:»

\* \* \*

«... Անոր ամենէն ուշագրաւ առաւելու-  
թիւնը անխտրականութիւնն է: Հակառակ որ  
Կրթասիրացը հիմնուած է Հայ Բողոքականի  
մը կողմէ, սակայն անիկա անխտիր ըրած է  
իր նպաստը ամեն յարաւուանութեան պատ-  
կանող Հայ ուսանողներու: Ընկերութեան  
չափանիշը եղած է Հայկական բարձր նկա-  
րագիր, կարողութիւն, ընդունակութիւն, եւ  
ասոնցմէ աւելի՝ ծառայութեան ոգին: Այն  
ուսանողներ աւելի գիւրութեամբ կրցած են,  
փոխառութեամբ, նպաստ ստանալ, որոնք  
տրամադիր գտնուած են ապագային Հայու-  
թեան ծառայել, ըլլայ Ամերիկայի, ըլլայ  
մանաւանդ Հայաստանի մէջ:»

\* \* \*

«Միակ քննադատութիւնը զոր կ'ուզեմ  
ընել սա է, որ Կրթասիրաց չէ՛ կրցած դեռ  
Ամերիկահայ մեր հարուստները արթնցնել  
այդքան ազնիւ անդգոզուտ ու՜ր ամեն տարա-





կոյսէ ու քննադատութենէ վեր ազգային  
ժէսթի մը սատարելու : Արդարեւ Կրթասի-  
րացը կայծքար մը պէտք է ըլլայ բոլոր մեր  
ունեւորներուն բարեկամ եղողութիւնը փոր-  
ձող :»

Մտածելակերպով, խառնուածքով ու  
տեսակէտով իրարմէ բոլորովին տարբեր ազ-  
գայիններու այս ազնիւ գնահատումները եւ  
անոնց դիտողութիւնները արտագրելով,  
պարզապէս ուղեցինք Ամերիկահայ Կրթասի-  
րաց Ընկերութիւնը պատկերել իր տասնամ-  
եայ գործունէութեան հաւաքական տպաւո-  
րութեան մէջ, եւ այդ պատկերացումով, Ա-  
մերիկահայ ուսանողներու օգնելու կենսա-  
կան պէտքին վրայ ուշադրութիւնը հրաւի-  
րել, եթէ հնար է, բոլոր Ամերիկահայ կրթ-  
թասէր ազգայնոց, որոնք սիրտ մը ունին այս  
տառապակոծ ազգը ճշմարտապէս սիրելու,  
եւ հաւատք՝ արիւնաքամ, բայց կենդանի  
Հայութիւնը դարձեալ վերականգնած տես-  
նելու իր անցեալ փառքին մէջ :

Վարչութիւնս կը փափաքի այս առթիւ՝  
անգամ մ'եւս հրապարակաւ շեշտել զօրեղա-  
պէս թէ, Ամերիկահայ Կրթասիրաց Ընկե-  
րութիւնը թէ եւ ծագմամբ զուտ անհատական  
ձեռնարկ մը, սակայն իսկապէս հանրային է,  
իսպառ զերծ տարամերժ ունէ հանգամանքէ :  
Անիկա իր դրամագլուխով ու իր գործու-



նէութեամբ, յաւէտ կորիզ մ'է որուն շուրջ  
կրնայ բոլորուիլ ունէ կրթասէր Հայ, որ յօ-  
ժար է իր գործակցութեան բաժինը բերելու,  
եւ Ընկերութեան տարեկան պիւտձէին սա-  
տարելու:

Մեր բուն բաղձանքն է որ Ամերիկա  
գտնուող կրթասէր Հայեր, կամ Ընկերու-  
թիւններ, գործնական վեհ ժէսթով մը փու-  
թան մեզ հետ բաժնելու Ընկերութեանս վը-  
այ ծանրացող պատասխանատուութեան  
մեծ հաճոյքը — բարձրագոյն կրթութեան ի-  
խնդիր Հայ ուխտաւորներու դժուարութիւն-  
ները գէթ դո՛յզն ինչ թեթեւցնելու այս  
քաղցր առանձնաշնորհումը:

«Դաստիարակութիւնը,» կ'ըսէ ինք անց-  
եալ տարի, «լաւագոյն է քան կանգուն բա-  
նակ մը:»

Գերազանց ճշմարտութիւն մըն է այս:  
Բայց ո՞վ պիտի հաւատայ այս ճշմար-  
տութեան. այո՛՛ ո՞վ դերագոյն տեսիլքը պի-  
տի ունենայ բերը թեթեւցնելու այն Հայ գի-  
նուորներուն որոնք մեծամեծ զոհողութիւն-  
ներով այդ «լաւագոյն բանակին» յառաջա-  
պահները պիտի ըլլան:

Ահա՛, դերագոյն հարցը, որ մեզի հա-  
մար նոյնն էր երէկ, եւ նոյնն է այսօր ու  
վաղը:

Տ. Ա. ՏԻՔԻՃԵԱՆ

(Քարտուղար)







## ԱՐՁԱԳԱՆՔ

### ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՄԱՄՈՒԼԷՆ

«Ոեւէ անձ որ աննախապաշար ու անկաշկանդ մտքով մը ուշի ուշով կը կարդայ այդ տեղեկագրութիւնը, . . . . . չկրնար չտեսնել այն անգին եւ անգնահատելի ծառայութիւնը զոր կրթասիրաց Ընկերութիւնը այս տասը տարիներու ընթացքին մատուցած է Հայ ազգին :

. . . . .

«Ծառը իր պտուղէն կը ճանչցուի . . . . . :  
. . . . . «Ո՞վ կրնայ չտեսնել թէ անիկա թէպէտ կազմային ուշագրաւ երեւոյթ մը չ'ունի, եւ ճայն ու աղմուկ հանած չէ բնաւ իր գործերուն շուրջը, բայց իրականին մէջ կըրթասիրաց Ընկերութիւնը մեր արժէքաւոր եւ ուժեղ կազմակերպութիւններէն մէկն է, քանզի լոյսի ճառագայթներուն, ցօղի կաթիլներուն նման անիկա եկած է Հայ կեանքին ամենէն կենսական պէտքը լեցնելու — մարդ պատրաստելու ազգին համար :

« . . . . . Ո՞վ չգիտեր թէ մեր փլփլկած ու աւերած հայրենիքը վերականգնելու համար, դրամական մեծ ոյժի պէտք ունինք .



..... եւ ո՞վ կայ որ նոյնքան յատակօրէն  
չկարենայ տեսնել, թէ եթէ ազգին միտքն է  
որ պիտի շինենք, կեանքն է որ պիտի նորո-  
գենք, քիչ թէ միայն մեր կործանած շէն-  
քերուն եւ տաճարներուն կիսափուլ պատե-  
րը, հետեւապէս իմացական ու բարոյական  
ոյժ պէտք է, մարդ պէտք է մեզի :

«Ազգին համար մարդ պատրաստելու»  
գաղափարի գինւորներ, ստքի մշակներ  
հասցնելու այս գործը ուրեմն, սուրբ գործ  
է, վսեմ գործ է, եւ այս գործին է որ նուիր-  
ուած է Հայոց կրթասիրաց Ընկերութիւնը :  
Եւ անոր տասնամեակին առթիւ, Ամերիկայի  
կրթասէր Հայ ժողովուրդին պարտականու-  
թիւնն է չէ՛ թէ միայն իր խնամոտ ուշադ-  
րութիւնը դարձնել այս կրթական ձեռնար-  
կին, այլ նաեւ անոր շուրջը բոլորուիլ եւ իր  
նիւթական ու բարոյական աջակցութեամբը  
բարձրացնել զայն աւելի լայնարձակ, եւ ա-  
ւելի հզօր կրթական ազգային կազմակեր-  
պութեան մը դիրքին, որպէս զի անիկա կա-  
րող ըլլայ աւելի մեծ ոյժով, եւ աւելի մեծ  
արդիւնաւորութեամբ դահացում տալ ազգին  
այս մեծ ու կենսական պէտքին :

«..... Ամե-  
րիկահայ կրթ. Ընկերութիւնը ժողովուրդինն  
է, եւ ժողովուրդին համար է : Պէտք է, ու-



րեմն, որ ժողովուրդը իր քաջալերութեամբ  
բը, համակրութեամբը եւ դործնական օժան-  
դակութեամբը ջրէ ու խնամէ այս պտղատու  
ծառը որ անխկա տարիէ տարի աւելի ուն-  
ճանայ, մեծնայ, արմատ կապէ, ճիւղեր ար-  
ձակէ, եւ իր համեղ պտուղներովը լեցնէ  
Հայ աշխարհը» :

Օգոստ. 5, 1916 «ԿՈՉՆԱԿ»

\* \* \*

«Ուրիշ կէտ մը, որ այս առթիւ կարելի  
է չլինել, Ամերիկահայ միւս հարուստներու  
դատապարտելի անտարբերութիւնն է, որով  
անոնք միայնակ ձգած են Պ. Փուշմանը իր  
համակրելի ձեռնարկին մէջ : Եթէ ունենա-  
լինք քանի մը ուրիշ Փուշմաններ եւս, եւ  
«Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութիւն»ը  
իր արամադրութեանը տակ ունենար զէթ  
հարիւր հազար տոլարի դրամագլուխ մը,  
կարելի էր շատ աւելի մեծ եւ մնայուն ծա-  
ռայութիւններ Ամերիկահայ ուսանողու-  
թեան, որուն կարեւոր դեր մը վերապա-  
հուած է մեր վաղուան հայրենիքին վերա-  
կանդնումին մէջ :»

Օգոստ. 8, 1916 «ՀԱՅՐԵՆԻՔ»

\* \* \*

«... Այն 72 ուսանողները՝ որոնք  
օգտուած են իր հիմնած հաստատութենէն,  
այսօր մտքի, արուեստի ու ճարտարութեան



Թանկագին գանձ ու ճշմարիտ հարստութիւն մըն են ազգին համար : Չենք կրնար ըսել թէ, եթէ Ամերիկահայ Կրթասիրացին օգնութիւնը չ'ըլլար, անոնք պիտի ստիպուէին հրաժարիլ ընտրուած ասպարէզէն կամ կիսկատար թողուլ իրենց ուսումը, սակայն առանց այլեւայլի պէտք է ընդունիլ, որ այս օգնութիւնը մեծապէս դիւրացուց անոնց գործը եւ պատեհութիւն ընծայեց՝ առանց դրամի եւ ապրուստի մասին մտահոգութեան բոլոր սրտով եւ ոյժով նուիրուիլ իրենց ուսման ընթացքին, . . . . . :

« . . . . . Մենք կը խորհինք որ Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութիւնը իր տասնամեայ գործունէութեան տեղեկագիրը շատ բարեպատեհ առթիւ մը կը հրատարակէ : Հարկ իսկ չ'կայ բացատրել թէ իր նպատակն ու գործը, ազգային վերջին աղէտներէն ի վերինչ մեծ եւ լուրջ նշանակութիւն մը ստացած է Հայ ժողովուրդին համար : Թէ ինկածներուն տեղը լեցնելու եւ թէ պատերազմէն յետոյ ստեղծուելիք կացութեան պահանջներուն գոհացում տալու համար, Ազգը այսօր ամէն ժամանակ աւելի պատրաստուած մարդոց եւ ոյժերու պէտք ունի, եւ այս գործը իր դիրքին ու գտնուած պայմաններուն բերումով ամենէն աւելի Ամերիկայի Հայ գաղութին վրայ կը ծանրանայ : Հետե-



ւարար, պէտք է Ամերիկահայ Կրթասիրաց  
Ընկ. թիւնը բազմապատկէ իր միջոցներն ու  
գործունէութիւնը, աւելի ժողովրդական  
ձեւ ու հանգամանք ստանայ, որպէս զի կա-  
րենայ իրագործել կարեւոր մէկ մասը այն  
ժառանգութեան զոր Ազգը իրաւամբ կ'ակնկա-  
լէ Ամերիկայի Հայ գաղութէն» :

Օգոստ. 16, 1916

«Ա.ԶԳ»

\* \* \*

«Օգնութեան կարօտ եւ քաջալերութեան  
արժանի ուսանողներուն թեւ թիկունք ըլլալ  
այս երկրին մէջ՝ ո՛չ միայն մարդասիրական  
պարտականութիւն մըն է, այլ նաեւ մեր ազ-  
գային ամենէն լուրջ պարտականութիւննե-  
րուն առաջիններէն է :

« . . . . . »

«Այս գործը՝ (Ամերիկահայ Կրթ. Ըն-  
կերութիւնը) վէճի, առարկութեան, խժրը-  
ծանքի, փախուստի տեղի տուող գործերէն  
չէ : «Կուսակցական» ձեռնարկ ու փորձ մըն  
ալ չէ, որ մեր երկիւղած եւ խոհեմ ունեւոր-  
ներ պատճառ ունենային իրենքզիրենք հեռու  
պահելու անկէ : Հայու եւ Հայ Բողոքականի  
խնդիր ու խտիր ալ չ'կայ այս ընկերութեան  
մէջ, հակառակ այդպէս փափաացողներուն :  
Օգնութեան կարօտ եւ քաջալերութեան ար-  
ժանի Հայ ուսանողներուն զօրավիգն ըլլալ,



որպէս զի անոնց ներսը թաքչած տաղանդը մշակուի եւ արտափայլի, քաջալերել զանոնք, որպէս զի Հայու արժանապատուութիւնը ուժաւորի եւ աւելի ամրանայ անոնց ներսը եւ նուիրուի ծառայութեան գործին, ասիկա կը նշանակէ ազգաշինութիւն, որուն կարելի է նպաստել քիչ մը կամքով, եւ երբ լուրջ ուշադրութիւն եւ ազնիւ կամք միանան, կրնան յառաջ բերել՝ բաղձացուած գործն ու արդիւնքը:

«Մենք ջերմապէս կը յանձնարարենք Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութիւնը Ամերիկայի Հայոց խորին ուշադրութեան եւ իրենց վրայ պարտք կը դնենք, որ մասնակցին ատոր յաջողութեան, այն հաւատքով որ մարդասիրական եւ ազգասիրական լուրջ գործի մը կը նպաստեն:

«Ինձ համար մասնաւոր շահեկանութիւն ունի Ա. Կ. Ընկերութիւնը նաեւ այն տեսակէտէն, որ օր մը այդ ընկերութիւնը կրնայ միանալ եւ նոյնանալ Ամերիկահայ Ուսանողական Միութեան հետ՝ եւ այսպէս ստեղծել անխորտակելի կեդրոն մը գործունէութեան, որ Ամերիկայի Հայ ուսանողներուն կ'օգնէ, եւ ատով օգնած կ'ըլլայ ազգաշինութեան տեւական գործին»:

Օգոստ. 18, 1916 **ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

(Ազգ.)



«Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերու-  
թեան տասնամեակը ինձ եւ թերեւս շատե-  
րուն համար նոր յայտնութիւն մը եղաւ: Գի-  
տէի որ շատ մը Ուսումնասիրացներ, Կրթա-  
սիրացներ կան, բայց կ'անդրտանայի դոյն-  
թիւնը ուսանողներու նիւթապէս սատարելու  
բարձր գաղափարաւ հաստատուած դրու-  
թեան մը: Սրտի անհուն հրճուանօք ողջունե-  
ցի այդ գեղեցիկ ձեռնարկը եւ հրապարակաւ  
ալկը փութամ փառարանելու անոր ծնունդ  
տունները . . . . .»

« . . . . . Գուցէ շատերուն դեռ մատչելի  
չըլլայ գաղափարին բարձրութիւնը եւ նկատ-  
եալ արդիւնքին գերազանց կարեւորութիւնը .  
ես որ ուսանողական այդ տաղնասլներէ ան-  
ցած եմ իմ ժամանակիս, ես դիտեմ եւ կ'ըզ-  
գամ թէ ինչ ըսել է ուսման ծարաւով տան-  
ջուող ընդունակ՝ պարկեշտ ու խոսամնալից  
ուսանողի մը օգնութեան հասնիլ եւ ազատել  
զինք օրուան հացը մտածելու կենսամաշ մը-  
տահոգութենէն որ քանի քանի սուր հանճար-  
ներ բթացուցած, փայլուն ընթացքներ խա-  
փանած, յոյսեր շիջեցուցած եւ կեանքեր  
բարձած է: . . . . .»

« . . . . . Պէտք է խորապէս համոզուինք  
եւ խոստովանինք թէ մեր . . . երիտասար-  
դութիւնն է Ազգին կենդանութեան յոյզը եւ  
յոյսը: Պէտք է ամեն ջանք ի գործ դնենք ու-



րեմն կորովի՝ առողջ՝ պարկեշտ եւ գործելու  
ատակ եւ գիտակ երիտասարդութիւն պատ-  
րաստելու: . . . . . մեր աժմու հանգամանք-  
ներուն մէջ պէտքէն աւելի բան մ'է, բունա-  
դատիչ հարկ մ'է որ ամեն Հայուն ուշադրու-  
թիւնը պէտք է գրաւէ: Մեղք է, ոճիր է  
այլեւս թող տալ որ դեռածիլ կոկոնները  
խամրին գօսանան առ ի չգոյէ կենսաւորիչ  
հիւթոյ:

«Կուղե՞նք փրկել Ազգը, փրկենք երի-  
տասարդութիւնը, ասպարէզ տանք անոր,  
անոնք են որ նշխարեալ բեկեալ հայութիւնը  
այսուհետեւ պիտի վերականգնեն եւ պիտի  
ամրապնդեն: Մեծապէս գոհութեան արժանի  
է, տրամադրուած գումարին տարողութեա-  
նը չափաւ, 10 տարուան մէջ 72 ուսեալ կըրթ-  
եալ անդամներ հաշուելը Հայ զանգուածին  
մէջ, բայց չենք կրնար այսուհետեւ այս չա-  
փով բաւականանալ, պէտք է լէզէոններ ու-  
նենանք մօտիկ ապագային մէջ Հայաստան  
աշխարհ թափելու. այս է վերակենդանու-  
թեան պայմանը եւ միջոցը . . . . .»:

«Հեղգայու՝ վարանելու՝ տատամսելու  
ժամանակ չ'ունինք, փութով ի գործ սկը-  
սելու ենք. պարապ անցած ամեն մէկ վայր-  
կեանը ապագայ ոյժի մը կորուստ կսպառ-  
նայ մեզ: Սրտի ինչ բուռն սեղմամբ կարդա-  
ցի շատ մը ուսումնատենջ պարմանեաց եւ



պարմանուհեաց աղամայ մերթուխլը, ֆրե-  
տի անբաւականութեան երեսէն: Ափսո՛ս,  
կորան մեզ համար բոլոր այս յոյսերը եւ դեռ  
ինչե՛ր պիտի կորսուին եթէ չ'չտապենք ի  
դարման»:

Օգոստ. 26, 1916 (Տր.) Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ  
(Կոչնակ)

\* \* \*

«Պատերազմը իր ընթացքին մէջ անհուն  
զոհողութիւններ կը պահանջէ հայրենիքին  
պաշտպանութեան համար: Սակայն պատե-  
րազմէն վերջ կուգայ վերաշինութեան շըր-  
ջանը, ուր իմաստուն եւ հեռատես առաջ-  
նորդներ իրենց հաւաքական փորձառու-  
թեամբ կը միանան վերակերտելու ազգային  
փլուզեալ տաճարը:

«..... Մայր հայրենիքը մեզմէ . . . . . ի  
վերջան զամենայն կը պահանջէ դաստիա-  
րակեալ առաջնորդներ, որք ըմբռնած են  
Անգլո-Սաքսոն քաղաքակրթութեան հիմնա-  
կան սկզբունքները, քաղաքակիրթ կեանքի  
պայմաններով ապրիլ գիտեն, կառավարել ու  
կառավարուիլ սորված են, մեծամասնու-  
թեան որոշումը կը յարգեն, եւ որոնք կը  
հասկնան թէ ի՛նչ կը նշանակէ շինիչ օրէնս-  
դրութիւն: Կ'ուզե՞նք Ազգին տունը շինել  
պատերազմէն վերջ: Ունի՞նք Երէմիայի հա-  
ւատքը եւ բարոյական կորովը: .....



Ի՞նչպէս պիտի պատրաստենք դաստիարակեալ եւ կորովալիք երիտասարդներ, որք յօժար են հոն երթալ եւ իրենց տաղանդը դնել ի սպաս Ազգին վերականգնումին:

«Այս կենսական հարցումին լիուլի կը պատասխանէ Կրթասիրացի Տասնամեայ Տեղեկագիրը . . . . ., որ արժանի է ամեն խոհուն Հայու նկատառութեան: Ազգաշէն գործունէութեան ի՞նչ պատուական record մը: . . . . . Ամերիկայի Հայ գաղութին կեանքին մէջ անգուղական ձեռնարկ մըն է այս . . . . .:

«Կրթասիրացին կարեւորութեանը մասին խնդիր չ'կայ: . . . . . Անկարելի է որ ազգային այսպիսի մեծ ձեռնարկի մը բոլոր պատասխանատուութիւնը մէկ անհատին ուսերուն վրայ ծանրանայ: . . . . . Հաստատութիւնք այն ատեն ազգի մը կեանքին մասը կ'ըլլան երբ համօրէն ժողովուրդին կեանքովը կը սնանին:»

Սեպ. 9, 1916 (Տր.) Հ. Ս. ՃԷԼԱԼԵԱՆ  
(Կոչնակ)

\* \* \*

«Դիտելի է թէ այս Ընկերութիւնը իր համեատ հիմնադրամով կրցած է անսխալութիւնեւ ծառայութիւն մը մատուցանել մեր կարօտ ազգին: Մխիթարական պարագայ մըն է ասիկա: Անոր տուած պտուղները կը դրանենք մօտաւորապէս ամէն գաղութի մէջ:



Հոս այս հեռաւոր գաղթականութիւնը (Քա-  
լէֆորնիա) անգամ անոր սաներէն ունի իր  
մէջ եւ՝ հպարտ կ'զգայ անոնցմով :

« . . . . . »

«Մեղադրելի ենք ամենքս ալ անխտիր,  
բայց մեր հարուստ գասակարգը պատասխա-  
նատուութեան շատ մեծ բաժին մը ունի իր  
ուսերուն վրայ : Անոնք . . . . . իրենց ազգային  
չափ մը սլարտականութեանց մէջ ցոյց տուած  
անտարբերութիւնը եթէ կրցած են կերպիւ  
մը կամ գոնէ պատրուակով մը արդարացնել,  
բայց կարող եղած չեն եւ անխտիր կարող չ'ըլ-  
լան յաւիտեան արդարացումի ստուեր մը  
անգամ գտնել այս մասնաւոր խնդրոյ մէջ,  
յորում յեղափոխականը, պահպանողականը,  
կուսակցականը, հարուստն ու աղքատը հա-  
մամիտ են անվերապահ կերպիւ :

« . . . . . »

«Կրթասիրաց սաներու վրայ մեծ պար-  
տականութիւն մը կը ծանրանայ այս մասին :  
Ամէն գաղութի մէջ կան անոնցմէ քանի մը  
ներկայացուցիչներ : Անոնք կրնան եւ պար-  
տին իրաւամբ կամ աւոր միտիոնարները ըլլալ  
այս գործին մէջ ու ծառայել այն հաստատու-  
թեան որուն երախատապարտ են անշուշտ :»

Սեպտ. 9, 1916 «ՆՈՐ ԿԵԱՆՔ»

\* \* \*

« . . . . . Տասը տարուան լռիկ գործունէ ու-



Թիւն մը, որ Ամերիկահայուն այնքան մեծ  
ծառայութիւն մը մատուցած է, արդարեւ  
քաջալերական երեւոյթ մըն է Հայ դադութին  
կեանքին մէջ եւ արժանի բարձրագոյն դնա-  
հատութեան: . . . . Կրթասիրացը, սակայն,  
իր յառաջ բերած գործնական արդիւնքէն ա-  
ւելի կարեւոր ծառայութիւն մը կը մատու-  
ցանէ հակասութիւն մը մատնանշելով Ամե-  
րիկահայուն հայրենասիրութեան մէջ. Ամե-  
րիկահայը ամեն զոհողութիւն կ'ընէ հայրե-  
նիքի Հայուն համար, սակայն բոլորովին ան-  
տես կը թողու Ամերիկահայ դադթականը:  
Այն կազմակերպութիւններ որոնց նպատակն  
է օգնել Հայուն եւ բարձրացնել Հայ նկարա-  
գիրը եւ Հայ պատիւը այս երկրին մէջ, շատ  
աննշան քաջալերութեան մը արժանացած են  
հանրութենէն:

«Ամերիկահայ Կրթասիրացը, ուրեմն,  
կուգայ շեշտել այս ծառայութեան կարեւո-  
րութիւնը այնպիսի ծրագրով մը որ պատիւ  
կը բերէ . . . ., եւ իր տասը տարուան գործու-  
նէութեան գործնական օրինակովը կը ներ-  
կայանայ մեզ իբրեւ ձեռնարկ մը որ բեղուն  
է հզօր կարելիութիւններով մեր ազգին հա-  
մար:

« . . . . . ճշմարիտ է թէ Կրթասի-  
րացը ցարդ գրեթէ անհատական ձեռնարկի  
մը հանգամանքը ունեցած է, եւ թերեւս լա-



ւագոյն էր այդպէս ըլլալ սկիզբէն, սակայն  
հարկ չ'կայ որ ան մնայ միշտ նոյն կերպով,  
ոչ ալ կը խորհիմ թէ իր հիմնադրին փա-  
փաքն է զայն պահել իբրեւ անհատական  
ձեռնարկ: Յարմարագոյն ժամանակն է ու-  
րեմն որ ազգին կարող անհատները, կարող  
նիւթապէս եւ մտաւորապէս, մէջտեղ դան եւ  
ընդարձակեն այս լաւ սկսուած գործը, ա-  
նոր տալով ազգային շուրջ ձեռնարկի մը  
հանգամանքը, անոր շուրջ հաւաքելով Ամե-  
րիկահայ գաղութին բոլոր տրամադրելի ոյ-  
ժերը, եւ պատրաստելով զայն ազգաշինու-  
թեան մեծ գործին համար, մօտաւոր ապա-  
գային մէջ»:

Սեպ. 16, 1916 Փրոֆ. Տ. Հ. ԳԱՊԱԳՃԵԱՆ

Փէնսիլվէնիա համալսարան

Ֆիլատելֆիա

\* \* \*

«Ամերիկահայ կրթասիրաց Ընկերու-  
թիւնը՝ իր տասնամեակը տօնեց քանի մը շա-  
բաթ առաջ ու պանծալի տեղեկագրութիւն մը  
դրաւ ժողովրդին առջեւ: Անկարելի է թոյլ  
տալ որ այդ տեղեկագրութեան արձագանգը  
կորնչի մեր դրաղուճներուն եւ առօրեայ քը-  
մահաճոյքներուն խառնաշփոթութեան մէջ՝  
առանց գոնէ հիացումի եւ երախտագիտու-  
թեան ձայն մըն ալ աւելցնելու արդէն բարձ-  
րացած ձայներուն:



«..... Եւ սակայն ..... այս յաջող  
 փորձէն վերջ՝ ներելի՞ է թողուլ որ Ամերի-  
 կահայ կրթասիրացը անհատական ձեռնարկ  
 մը մնայ եւ դեռ ոգորի այն դժուարութիւն-  
 ներու դէմ զորս տեղեկագիրը կը մատնանը-  
 շէր: Ներելի՞ է որ անիկա դեռ շարժի այն  
 անձուկ շրջանակին մէջ՝ զոր իր հասոյթը ի  
 հարկէ կը գծէ իրեն համար: Մանաւանդ այ-  
 սօր՝ երբ Հայութեան մեծ աղէտին առջեւ  
 ապշահար՝ առաւել քան երբեք անոր ապա-  
 դայով կը մտահոգուինք: ..... վերաշի-  
 նութիւնը՝ այլեւս քաղաքական կամ յեղա-  
 փոխական ծրագիրներու վրայ չ'է որ պիտի  
 սկսի՝ այլ կրթական, կրօնական եւ տնտեսա-  
 կան գիծերու վրայ: Եւ մանաւանդ անիկա  
 պէտք պիտի ունենայ կորովի եւ վարելու  
 կարող երիտասարդներու .....

«Եթէ ամենքս ալ՝ հարուստ, բարեկե-  
 ցիկ, ազքատ խորհինք թէ մեր անձերուն վը-  
 րայ դրուած քչիկ մը զոհոգութեամբ, մեր  
 հաճոյքներէն եւ շռայլութիւններէն կտրուած  
 փոքրիկ խնայողութեամբ մը կրնանք մեր եղ-  
 բայրներէն բիւրաւորներ կերակրել, կրթել  
 ու երջանկացնել, եթէ խորհինք թէ՛ այդ  
 բիւրաւորներու կարօտութեանց առջեւ՝ անօ-  
 թի ազգի մը մեղի պէս յափրացած դաւակնե-  
 րուն համար վատութիւն է այդ չափը դլա-  
 նալ՝ որքան աւելի տարբեր պիտի ըլլար մեր



զործը եւ որքան աւելի պատուարեր՝ մեր  
պատրաստած ապագան» :

Սեպ. 23, 1916

Մ. Կ. ԱՆԱՆԻԿԵԱՆ

\* \* \*

«Սրտիս խորէն կը ձայնակցիմ անոնց որ  
Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութեան  
տասնամեայ արդիւնքն եւ անոր հիմնարկուն  
..... գովեցին :

«Հիմնարկուն արդէն ըրածը գովելէ  
աւելի՛ պէտք է գնահատենք իր նոր ճիշդ ո-  
րով կը ջանայ աւելի ուժեղ եւ արդիւնաւէտ  
հանդիսացնել այս ընկերութիւնը :

«Ժամանակը հիմա աւելի մեծ պահանջ-  
ներ կը դնէ մեր ազգին առջեւ եւ կ'ստիպէ  
մեր ջանադրութիւններն ու գոհողութիւններ  
բարձրացնել այնքան որ համապատասխանեն  
այդ նոր ու ահագին պահանջներուն :

«Այս ընկերութիւնը երկրորդական կամ  
բարձրագոյն կրթութիւն առնող Հայ երի-  
տասարդութեան ուսանողական ընթացքը  
յաջող եւ դիւրին գործելու ծառայել կ'ուզէ :

«Անվիճելի բան է թէ բարձր կրթութիւնը  
մեր մէջ պէտք է ծաւալենք : Եւ ոչ ալ տարա-  
կոյս կայ թէ նոր Հայաստանը վաղը մեծ  
մասամբ Ամերիկայէն պիտի սպասէ իր նոր  
դաստիարակներն ու առաջնորդներ :

.....

«Արդէն բժիշկներ, երկրաչափներ եւ



վաստարաններ անգտանելի չեն մեր մէջ,  
թէեւ աւելիին պէտք ունինք: Սակայն ամէն  
բանէ առաջ դաստիարակներ պէտք են:  
Մինասեանի, Րազուպեանի, եւ Մանդինեանի  
կարգէն դաստիարակներ: Մեր ազգին համար  
մեծագոյն բարոյական աղէտը կ'ըլլայ նո-  
րափթիթ սերունդին կրթութիւնը թողուլ  
թունաւորիչներու ձեռքը:

«Յատկապէս պատրաստել պէտք է նաեւ  
արհեստագիտական դաստիարակութեան ու-  
սուցիչներ, որք արհեստներ սորվեցնեն մեր  
պատանեաց . . . . .»:

«Ոչ նուազ անհրաժեշտ է պատրաստել  
նաեւ եկեղեցական պաշտօնեաներ, քահանա-  
ներ, քարոզիչներ եւ վարդապետներ Հայ ե-  
կեղեցւոյն եւ ժողովուրդին հոգեւոր շինու-  
թեան մեծ գործին համար: . . . . . Մեր  
ազգը պէտք ունի լուսամիտ, նուիրուած եւ  
կորովի հոգեւոր հովիւներու որ զինքը հե-  
ռացնելով անկրօնութեան եւ այլ ցնորամը-  
տութեանց ճախճախուտներէն եւ թունալից  
թաւուտքէն՝ առաջնորդեն զինքը իտէալի  
ժողկաւէտ բարձրունքները եւ երկնաբերձ  
մաքուր մթնոլորտը»:

Սեպ. 30, 1916

Տք. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ



## ՀՈՒՍԿ ԲԱՆՔ

Վերջին՝ կամ նոր ըսելիք չ'ունինք բնաւ :  
Հարցում մը միայն .—

Իրաւ կը սիրե՞ս ազգդ :

Կ'ըմբռնե՞ս դաստիարակութեան անհր-  
րաժեշտ եւ փրկարար դերը՝ ցեղիդ վերած-  
նութեան, յարութեան սուրբ գործին մէջ :

Գլտորէ՛, ուրեմն, անտարբերութեան,  
դժկամակութեան, դանցառութեան եւ այլ  
նկատումներու տապանաքարը սրտիդ վրա-  
յէն : Թող Հայութիւնը քու անձիդ մէջ վե-  
րականգնի նախ :

Ոե՛ւէ քանակութեամբ գումար կրնայ  
ծառայել Կրթասիրացի նպատակին :

Տրուած գումարները բացարձակապէս  
գործածելի են նուիրատուի հրահանգներուն  
համաձայն :

Դրամի առաքութեան, եւ կամ՝ այդ ուղ-  
ղութեամբ որոշ հասկացողութեան մը դալու  
համար՝ պէտք է դիմել Ընկերութեանս գան-  
ձապետին :

MR. G. T. PUSHMAN

16 S. Wabash Ave.

Chicago, Ill.



## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կը փութանք հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել բոլոր այն բարեկամներուն, որոնք այնքան ազնուարար ծառայեցին Ընկերութեանս իրենց դրամով, խորհուրդներով ու թելադրութիւններով, ինչպէս նաև բոլոր այն ուսանողներուն, որոնք խիստ գրնահատելի վերաբերումը ունեցան իրենց պարտքերը ճիշդ ժամանակին, եւ ոմանք նոյնիսկ ժամանակէն առաջ վճարելու:

Մեր ջերմ շնորհակալութիւնները նաև Ամերիկահայ թերթերուն, որոնք թէ՛ իրենց խմբագրականներով, թէ՛ տեղեկագրիս եւ թէ՛ այլեւայլ հեղինակաւոր անձանց յօդուածներու հրատարակութեամբ քաջալերեցին ու դրուատեցին Ամերիկահայ Կրթասիրաց նպատակը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



## ՆՊԱՏԱԿ

Ընկերութեանս նպատակն է, առանց յարանուանական կամ՝ այլ խտրութեան, դրամապէս օգնել ՍՏԵՐԻԿԱ գտնուող խոստմնալից եւ կարող Հայ երիտասարդներու եւ երիտասարդուհիներու, որոնք արուեստագիտական (professional) բարձր դասընթացքի մը հետեւելու համար նպաստի կը կարօտին:

### ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նպաստ կը տրուի միայն այն աշակերտներու, որոնք գոլէճէ կամ՝ ուսումնարանէ մը (High School կամ Academy) պատուով շրջանաւարտած, եւ արդէն տարի մը հետեւած են արուեստագիտական ընթացքի մը ՍՏԵՐԻԿԱյի կըթական պատուաւոր հաստատութիւններէն մէկուն մէջ:

2. Նպաստընկալի իմացական ու Ֆիզիքական անհրաժեշտ յարմարութենէն ի դատ՝ կը պահանջուի նաեւ ազնիւ նկարագիր—ըլլալ խոհեմ, խնայասէր, ժուժկալ եւ բացարձակապէս զերծ յոռի ու անբարոյ արարքներէ:

3. Նպաստը կ'ըլլայ իբր փոխատուութիւն միայն, ու հետեւաբար՝ նպաստընկալէն օրինական մուրհակ կ'առնուի, անոր մէջ պահելու համար անձնական արժանապատուութեան ոգին եւ ինքնօգնութեան փրկա-



րար գաղափարը :

4. Նպաստը կը տրուի մէկ տարուան համար միայն : Կրկին փոխառութիւն ուզողներ ուստի՝ պարտին տարուէ տարի նորոգել իրենց դիմումը Ընկերութեանս մօտ՝ իրենց դպրոցական վարկի եւ բարուց ի նպաստ հաւաստիք տալով :

5. Նպաստի գումարը ուսանողին դպրոցաշրջանի ընդհանուր ծախուց կէսէն պակաս կ'ըլլայ, կամ, առ առաւելն, միայն կէսը, եւ կը տրուի երկու մասնավճարով, մէն մի դպրոցական շրջանի սկիզբը :

6. Աշակերտ մը դպրոց լրացնելէ առաջ կամ՝ վերջը, երբ դործի կսկսի, պարտի իր ամսական եկամուտէն առ նուազն տասն եւ հինգ առ հարիւր (150/0) Ընկերութեանս վրճարել ի հաշիւ իր պարտուց, առանց սպասելու մուրհակի պայմանաժամի լրանալուն :

















